

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/4
27 փետրվարի 2018թ.**

Քննարկվեց «ԼԱՐՍ» ՍՊԸ բողոքը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տուգանքը վերանայելու վերաբերյալ:

«ԼԱՐՍ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

«ԼԱՐՍ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) կողմից 2017թ. 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը եռամսյակային կտրվածքով ներկայացվելու փոխարեն ներկայացվել է ամսական կտրվածքով: Ընդ որում, ընկերության կողմից ներկայացված ամսական հաշվարկում արտացոլվել են ընկերության եռամսյակային տվյալները, պարզապես թյուրիմացաբար հաշվետու ժամանակաշրջանը եռամսյակի փոխարեն նշվել է ամսական: Այդ պատճառով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն Արաբկիր ՀՏ-ում հաշվարկվել է տուգանք և ընկերության կողմից վճարված գերավճարից պակասեցվել է 705.546 ՀՀ դրամ գումար:

Նկատի ունենալով, որ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը նմանատիպ դեպքերի հետ կապված նախկինում կայացրել է մի շարք որոշումներ ի օգուտ հարկատուի, ընկերությունը խնդրում է վերացնել (անվավեր ճանաչել) Արաբկիր ՀՏ-ի կողմից «ԼԱՐՍ» ՍՊԸ-ի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված 705.546 ՀՀ դրամի տուգանքը և այն վերականգնել ընկերության հաշվառման քարտում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնա- ժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնա-
ժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԼԱՐՍ» ՍՊԸ-ի համար ավելացված արժեքի հարկ վճարելու հաշվետու ժամանակաշրջանը հանդիսանում է եռամսյակը:

«ԼԱՐՍ» ՍՊԸ-ի կողմից 19.10.2017թ. ներկայացվել է հերթական՝ 2017թ. 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը, սակայն հաշվարկի «6. Հաշվետու ժամանակաշրջանը» տողում թյուրիմացաբար «2017թ. եռամսյակ III» նշվելու փոխարեն, նշվել է «2017թ. Ամիս 09»: Արդյունքում ստացվել է, որ ընկերության կողմից 2017թ. 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը ներկայացվելու փոխարեն ներկայացվել է 2017թ. սեպտեմբեր ամսվա ԱԱՀ-ի հաշվարկը: Այնինչ իրականում 2017թ. 3-րդ եռամսյակի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում տեղ է գտել վերը նշված վրիպակը:

Այնուհետև, 15.11.2017թ. ընկերության կողմից, ըստ էության, կրկին անգամ ներկայացվել է կողմից 2017թ. 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը, որում արդեն հաշվետու ժամանակաշրջանը նշվել է ճիշտ: Արդյունքում հաշվարկում արտացոլված՝ բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարի նկատմամբ, կիրառվել է «Հարկերի մասին»